

**Որոշ դիտարկումներ արևմտահայերենի
«կոր» մասնիկի վերաբերյալ**

Սարգսյան Նոանե

***Հանգուցային բառեր.** ներկա շարունակական, ժամանակաձև, միջին հայերեն, կոյ, խոսակցական լեզու, գրական լեզու*

Նախաբան

Հայագիտության մեջ արևելահայերենին զուգահեռ մշտապես կարևորվել է հայոց լեզվի մյուս տարբերակի՝ արևմտահայերենի լեզվական համակարգի քննությունը, բառապաշարային ու քերականական իրողությունների վերհանումը: Այս առումով ուսումնասիրության հետաքրքիր նյութ է սահմանական եղանակը, որտեղ որոշակի տարբերություններ են դրսևորվում ոչ միայն ժամանակաձևերի կազմության, այլ նաև դրանց տարբերակման հարցում: Մասնավորապես մեզ հետաքրքրում է սահմանական ներկայի երկրորդ ձևը՝ շարունակական ներկան:

Արևմտահայերենում սահմանական եղանակի ներկա և անկատար անցյալ ժամանակաձևերը կազմվում են *կը* մասնիկով, որն ավելանում է ըղձական եղանակի բայաձևերին: Ներկա ժամանակաձևը ցույց է տալիս խոսելու պահին ընթացքի մեջ գտնվող, իսկ անկատար անցյալը՝ անցյալ ժամանակակետում ընթացքի մեջ գտնվող գործողություն: Եթե անկատար ներկայով և անկատար անցյալով բաղադրված կառույցները արտահայտում են նաև ընդհանրապես, առհասարակ կատարվող գործողություն, ապա շարունակական ներկայի դեպքում շեշտվում է գործողության տվյալ պահին կատարման ընթացքի մեջ գտնվելը: Այսինքն՝ ներկա շարունակականը ընդգծում է գործողության՝ խոսելու պահին շարունակաբար կատարվելու հանգամանքը: Վերջինիս իմաստն արտահայտվում է *կոր* մասնիկի միջոցով: *Կոր* մասնիկի իմաստային և գործառական այս առանձնահատկությունը վաղուց նկատված է հայ լեզվաբանության մեջ, սակայն մինչ օրս ամբողջական անդրադարձ կատարված չէ այն հարցին, թե այս մասնիկը միջին հայերենում գործածություն ունեցե՞լ է, թե՞ ոչ, եթե այո, ապա ինչպիսի՞, հատկապես, եթե միջին հայերենը դիտարկում ենք որպես արևմտահայերենի զարգացման մի շրջան:

Ծագումը և գործածությունը:

Կոր մասնիկի առաջացման մասին տարբեր վարկածներ են առաջ քաշվել:

Հ. Չալըխյանը, տաճկերենում շարունակական ներկայի տարբերակումը նկատի ունենալով, առաջ է քաշում *կոր*-ի՝ տաճկերենից հայերենին փոխանցվելու վարկածը [5, 366]: Ա. Այտընյանը ևս այս մասնիկի առաջացումը կապում է տաճկերենի հետ՝ այն նույնացնելով տաճկերենի *յոր* մասնիկի հետ. «Սահմանական ներկային և անկատարին վերջին ծայրին *կոր* մասնիկը դրվելով կը ցուցնէ թէ գործողութիւնը դեռ կը շարունակվի, կամ թէ հիման ըլլալու վրայ է. եւ նոյն է տաճկերեն *յոր* մասնկան հետ» [2, 98]: Հարցի քննությանն անդրադառնալիս Հ. Աճառյանը նշում է, որ շարունակական ներկայի և անկատար անցյալի ձևերը կազմվել են ոչ թե տաճկերենից փոխառությամբ, այլ վերջինիս ազդեցությամբ, որովհետև «նախ Կովկասում և Պարսկաստանում բնավ չկա այսպիսի ձև, գոյություն չունի նաև բուն Տաճկահայաստան, Պարսկաստանի սահմանից մինչև Կարին, Խարբերդ և Տիգրանակերտ: Երևույթն սկսվում է միայն Բաբերդից ու Մալաթիայից և առաջանում է մինչև արևմտյան սահմանը (Ռոտտոթոն)» [1, 97], ապա առաջարկում է նոր՝ *կու+որ* ձևից առաջացած լինելու վարկածը [1, 108]:

Կու մասնիկի առաջացման վերաբերյալ առկա վարկածներին անդրադառնալով՝ Գ. Ջահուկյանը հավանական է կարծում Ա. Այտընյանի՝ *կայ ու* և Մ. Աբեղյանի՝ *կոյ* ձևերից առաջացման տեսակետները, որոնցից առավել ընդունելի է համարում վերջին տարբերակը, քանի որ «որոշ վարերում *կու*-ն արտահայտում է ոչ թե ներկա, այլ հավաստիության ապառնի, մի բան, որ դժվար է բացատրել *կայ ու* կապակցությամբ. երկրորդ լեհահայ խոսվածքում (Առտիալի բարբառ) և Բասարգեչարում *կու*-ի դիմաց առկա է *կի* ձևը, որը անհնար է հնչյունապես բխեցնել *կայ ու*-ից կամ *կու*-ից, բայց դժվար չէ բխեցնել *կոյ*-ից» [6, 104]: Մեզ համար ևս առավել ընդունելի է *կու/կը* տարբերակի *կոյ* մասնիկից առաջացման վարկածը, և կարծում ենք, որ որոշակի աղերս կա *կոր* և *կոյ* ձևերի միջև: Կարելի է ենթադրել, որ *կոր* ձևը կարող է լինել *կոյ*-ի մի տարբերակը: Այսպես:

Միջին հայերենում ժամանակաձևերն աչքի էին ընկնում բազմիմաստությամբ, և մի ժամանակաձևը կարող էր տարբեր եղանակների իմաստներով գործածվել: Այդ էր պատճառը, որ գրաբարի ստորադասական եղանակի դուրս գալուց հետո, երբ գրաբարյան սահմանական ներկան և անկատար անցյալը ամբողջովին սկսեցին կիրառվել ստորադասական-

ըղձական եղանակի իմաստով, միևնույն ժամանակ պահպանում էին սահմանական եղանակի իմաստով գործածությունը: Այս դեպքում լեզուն գնաց պարզեցման ճանապարհով, և առաջ եկավ *կու* մասնիկը, որի կիրառության օրինակներ վկայված են վաղ միջնադարից: Նույնը տեղի ունեցավ, երբ նոր ձևավորված սահմանական եղանակի ներկա և անկատար անցյալ ժամանակաձևերը, պահպանելով գրաբարյան բազմիմաստության հատկանիշը, կիրառվում էին նաև ապառնի ժամանակի իմաստով: Առաջացած իմաստային շփոթից խուսափելու համար լեզվում սկսեցին գործածվել տարբեր մասնիկներ, որոնցից է *կոր* մասնիկը: Այսինքն՝ միջին հայերենում *կոյ* և *կոր* մասնիկները գործածվել են ներկա և ապառնի ժամանակաձևերի իմաստային շփոթից խուսափելու և ներկան հստակ տարբերակելու համար:

Առհասարակ, այսպիսի մասնիկները ծառայել են գործողության խոսելու պահին կատարվելու հանգամանքը շեշտելու համար: «Սա հաստատող ամենախոսուն փաստն այն է, որ շարունակական ներկա կազմող մասնիկների մեծ մասն ունեն այժմ, ահա իմաստը /կամ ծագում են այդ իմաստն ունեցող որևէ բառից» [4, 278]: Ասվածին հավելենք նաև այն կարևոր փաստը, որ շատ բարբառներում, օր. Տրապիզոնի, Արաբկիրի, այդ շարունակականի մասնիկը դնում են մաքուր ներկայի վրա [2, 98-99]: Սերաստիայում ընդհանրական ներկա կազմելիս *կը* մասնիկն ընկնում է բաղաձայնակիզբ բայերի դեպքում, եթե գործածվում է *կոր*-ը: Սա կարելի է բացատրել միայն մասնիկների իմաստային սերտությամբ, որը ենթադրում է ծագման և ձևավորման աղբյուրի ընդհանրություն: Ցավոք, միջին հայերենից պահպանված որևէ աղբյուրում գործածության օրինակներ չկարողացանք գտնել, թեև հստակ է, որ այս մասնիկը նախապես պետք է ձևավորվեր և կիրառություն գտներ միջին հայերենի շրջանում, ապա արևմտյան բարբառների միջոցով փոխանցվեր արևմտահայերենին:

Չիշենք, որ արևմտահայերենը ժառանգել է ներկայի և անկատար անցյալի կազմության միջինհայերենյան տարբերակը՝ *կու/կը գրեն*, *կու/կը խօսիմ*, *կու/կը գրէի* և այլն: Բերենք *կոր* մասնիկով շարունակական ներկայի կազմության հարացույցի օրինակ.

կը գրեն կոր կը գրենք կոր կը նայիմ կոր կը նայինք կոր
կը գրես կոր կը գրէք կոր կը նայիս կոր կը նայիք կոր
կը գրէ կոր կը գրեն կոր կը նայի կոր կը նային կոր
Բնագրային օրինակներ

.... **Կը կռուիս կոր** արդէն անոր դեմ (Գ. Պըլտյան, Մանտրաներ, էջ 31): «Ընդհանրապես կգործածենք Google Translator-ը կամ Bing-ի մեջ

*կթարգմանեինք: Արտահայտվելու պարագային կամ պարագրաֆ մը գրելու ատեն դժվար կըլլա կոր մենք արեւմտահայերեն կմտածենք, արեւելահայերեն որոշ չափով պիտի ներկայացնենք: Այդ տարբերակը քիչ մը դժվար է» (հմց, azatutyun.am): – Օօ օ, Պօղոս աղբարին պարտէ՞ք **կ'երթաք կոր**.– կ'ըսէ Օքան աշխուժացած եւ կ'աւելցնէ. – է՛ս ալ գամ (Ք. Բատիկեան) [3]: Ծեծը կ'ուտէ, **չի՛ կըշտանար կոր ...** (Մ. Պշաքճեան, ԵԼԾ, հ. 3, էջ 198): Ես մեղք չունիմ Մագօ Կարոն ըսաւ թատրոն **կը խաղաս կոր** (Ք. Բատիկեան, Սուփրը հերոսները կմեռնին ամրան, էջ 18):*

Գեղարվեստական գրականությունից, մամուլից բերված օրինակները ցույց են տալիս, որ այն լայն կիրառություն ունի արդի արևմտահայերենում: *Կոր* մասնիկը գործածական է խոսակցական լեզվում, գրական բանավոր խոսքում, սակայն որոշակի զգուշություն կա գրական գրավոր խոսքում կիրառելիս: Գեղարվեստական գրականության մեջ հերոսների խոսքում գործածվելիս *կոր* մասնիկը նաև ոճական դեր է կատարում: Այն խոսքին հաղորդում է խոսակցական երանգ, ստեղծում է անմիջականություն: Եվ գրական գրավոր լեզվում եղած զգուշությունը, կարծում ենք, մի օր զիջելու է կենդանի, աշխույժ ձևերի գործածության ներթափանցմանը:

Եզրակացություն

Կատարված վերլուծություններից ելնելով՝ կարող ենք հանգել հետևյալին՝

- շարունակական ներկան կազմող «*կոր*» մասնիկը արդի արևմտահայերենում լայն կիրառություն ունի,
- այս մասնիկը արևմտահայերենին է փոխանցվել միջին հայերենից և կարող է լինել «*կոր*» մասնիկի մի տարբերակը,
- կոր մասնիկը գործածվել է ներկա և ապառնի ժամանակաձևերի իմաստային շփոթից խուսափելու և ներկան հստակ տարբերակելու համար,
- *կոյ* և *կոր* մասնիկների իմաստային սերտությունը համոզիչ է դառնում հայերենի մի շարք բարբառներում ընդհանրական ներկայի կազմության ժամանակ՝ *կոր*-ի առկայության դեպքում բաղաձայնակիզբ բայերի պարագայում *կը* մասնիկի դուրս գալով,
- *կոր* մասնիկը գործածական է արդի արևմտահայերենի խոսակցական լեզվում, գրական բանավոր խոսքում, սակայն որոշակի զգուշության կա գրական գրավոր խոսքում կիրառելիս:

Գրականություն

1. Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 4, գիրք Բ, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1961, 543 էջ:
2. Այտընեան Ա., Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1987, 866 էջ:
3. Բատիկեան Ք., Ամառնային, <https://granish.org/christian-batikean-the-summer/>, (04.04.2021):
4. Գևորգյան Գ., Սահմանական եղանակի ներկա ժամանակի տարածական-գործառական բնութագիրը հայերենի բարբառներում, Հայերենի բարբառագիտական ատլաս, պրակ 3, Նաիրի, Երևան, 2010, 296 էջ :
5. Չալըխեան Հ., Քերականութիւն հայկազեան լեզուի, Վենետիկ, Մխիթարեան տպարան, 1885, 529 էջ:
6. Ջահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1972, 346 էջ:

Աղբյուրներ

Պըլտյան Գ., Մանտրաներ, Երևան, Սարգիս Խաչենց.Փրինթինֆո, 2010, 621 էջ:

Բատիկեան Ք., Սուփրը հերոսները կմենին ամրան, Երևան, Ինքնագիր գրական ակումբ, 2018, 126 էջ:

Պչաքճեան Մ., Երկերու լիակատար ժողովածու, հ. 3, Երևան, Հայաստան հրատարակչություն, 2013, 607 էջ:

Azatyun.am

Granish.org

Համառոտագրություններ

Հնց – համացանց

ԵԼԺ- Երկերու լիակատար ժողովածու

Некоторые наблюдения о частице «կոր» [kor]¹ в западноармянском языке

Саргсян Нране

Резюме

Ключевые слова: настоящее длительное время, время, среднеармянский язык, разговорный язык, литературный язык

В современном западноармянском языке частица «կոր» [kor] имеет широкое применение. С ее помощью образуется настоящее длительное время. Это время указывает на действие, которое происходит сейчас, в данный момент речи. В статье рассматривается вопрос о применении этой частицы в среднеармянском языке, с учетом того, что среднеармянский язык мы рассматриваем как период развития западноармянского языка. Эта частица перешла в западноармянский язык из среднеармянского языка и, возможно, была вариантом частицы «կոյ» [koj]. Возникшая из частицы «կոյ» [koj] частица կու [ku] /կը [kə], образовывала настоящее и несовершенное прошедшее время. Настоящее и несовершенное прошедшее время используется также в значении будущего времени. Применение частицы «կոր» [kor] с этими временами преследует следующие цели: 1. показывает действие, которое происходит сейчас; 2. выполняет отличительную функцию. Семантическая близость этих частиц, которая предполагает общность происхождения и формирования, подтверждается материалами некоторых диалектов армянского языка, в которых при формировании настоящего времени, частица կը [kə] употребляясь с глаголами, в начале которых находится согласный звук, превращается в «կոր» [kor].

Несмотря на то, что эта частица не используется в литературном письменном языке, тем не менее, в разговорном языке и в литературной устной речи она широко распространена. В художественной литературе эта частица выполняет также стилистическую роль.

¹ С помощью данной частицы образуются формы настоящего времени изъявительного наклонения и прошедшего продолжительного времени.

Some Observations about the Particle “կոր” of the Western Armenian Language

Sargsyan Nrane

Summary

Key words: *present continuous, tense, Middle Armenian, spoken language, literary language*

The particle “կոր” is widely used in Modern Western Armenian. It makes present continuous time, which indicates that an action or condition is happening now. This article discusses the question of whether this particle had been used in the Middle Armenian language, especially if we consider Middle Armenian as a period of development of the Western Armenian language.

In fact, this particle has been a variant of particle “կոյ” and has passed from Middle Armenian into Western Armenian. The particle կոյ/կը coming from particle “կոյ”, formed the tenses of present simple and past simple. These tenses were also used in the sense of future. So, “կոր” was used for indicating that an action is happening now, secondly it had distinctive function and clearly distinguished the present. The semantic proximity of these particles, which presupposes a common source of origin and formation, becomes convincing in discussing some Armenian dialects, where the particle կը is not used because of the usage of “կոր” in simple present tense.

In Western Armenian this particle is used in spoken and literary oral language. Speakers avoid using this particle in literary written language. It also has a stylistic role in literature.

Ներկայացվել է 05.04.2022 թ.

Գրախոսվել է 22.04.2022 թ.

Ընդունվել է տպագրության 27.05.2022 թ.